ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱՌԱՔԵԼ ՍՅՈՒՆԵՑՈՒ՝ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒՆ ՆՎԻՐՎԱԾ ՆԵՐԲՈՂԸ

Առաքել Սյունեցին Գրիգոր Տաթևացու մահվան առիթով գրել է դամբանական մի ներբող, որը զետեղված է «Քարոզգրքի» «Ամարան» տպագիր հատորի վերջում: Ճարտասանական հարուստ հնարանքներով և հյութեղ բառապաշարով հյուսված քնարական արձակի դասական այս քերթվածի համադրումը ժամանակակիցների հաղորդած հիշատակարանային և վարքագրական փաստերի հետ ցույց է տալիս՝ Առաքել Սյունեցին իր սիրելի ուսուցչի արձակ վարքը հյուսել է բանաստեղծական ներշնչանքով ու անկեղծ հիացմունքով և ոչինչ չի ուռճացրել, այլ հետաքրքիր մանրամասներով լրացրել է Տաթևացու մասին մեզ հասած կենսագրական տեղեկությունները:

Բանալի բառեր՝*Քարոզգիրք, դամբանական ներբող, վարք, «Ամարան» հատոր, հիշատակարանային փաստ, արձակ, քերթված:*

Տաթևի համալսարանի ծաղկուն շրջանը (1365-1415թթ.) կապվում է Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու, Մատթեոս Ջուղայեցու և Առաքել Սյունեցու անունների հետ, որոնցից առաջին երեքն առավելապես իմաստասեր էին, իսկ չորրորդը Գրիգոր Տաթևացու բնորոշմամբ՝ «երգաբան»-բանաստեղծ: Գիտամանկավարժական գործունեություն ծավալելով Տաթևի համալսարանում՝ նրանք կապված էին նաև ուսուցչի և աշակերտի տասնյակ տարիների ջերմ հարաբերություններով, որոնց մասին տեղեկությունները պահպանված են թե՛ ձեռագրերի հիշատակարաններում, թե՛ իրենց իսկ հեղինակած երկերում: Գրիգոր Տաթևացին իր ուսուցիչ Հովհան Որոտնեցուն ջերմորեն հիշում է իր երկերի հիշատակարաններում. նրա մասին հյուսել է սրտառուչ դամբանական ներբող[1]: Մատթեոս Ջուղայեցին ջերմությամբ և խոր հարգանքով շարադրեց իր ուսուցչի վարքը, որն առ այսօր շարունակում է Գրիգոր Տաթևացու կյանքի հիմնական աղբյուրներից մեկը մնալ[2]: Առաքել Սյունեցին պանծացրեց քեռու եւ ուսուցչի հիշատակն իր ամենահայտնի երկի՝ «Ադամգրքի» հիշատակարանում, նրան նվիրեց ներբողական տաղ «Առ վարդապետն իւր Գրիգոր մեծ ռաբունի» խորագրով[3]: Գրիգոր Տաթևացուն նվիրված նրա ամենածավալուն երկն ուսուցչի մահվան առիթով գրած արձակ ներբողյանն է (էջ 716-719):

Այս քերթվածը տպագրվել է Քարոզգրիքի «Ամարան» տպագիր հատորի վերջում «Առաքել վարդապետի ասացեալ ներբողեան առ քաջ հռետորն Տիե-

1 Գիրք քարոզութեան, որ կոչի Ամարան հատոր արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն եօթնալոյս վարդապետի, Կոստանդնուպօլիս, «Նորին Գրիգորի ներբողեան ողբերգաբար ոգեալ ի թաղումն տիեզերալոյս վարդապետին իւրոյ Յոհաննու Որոտնեցւոյ», Կոստանդնուպօլիս, 1741, էջ 711-716 (այս աղբյուրի բոլոր մեջբերումների համապատասխան էջն այսուհետև կնշենք շարադրանքի մեջ՝ փակագծերում):

2 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն առաջին (1401-1450), Կազմեց **Լ. Ս. Խաչիկյան**, Երևան, 1955, էջ 103-104 (այսուհետև՝ Հիշատակարաններ): Աշխարհաբար թարգմանությունը՝ **Խ. Գրիգորյանի**, տե՛ս «Սյունյաց երկիր», 2010, հմր. 16 (213), էջ 3:

3 **Անասյան Հ.**, Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ դդ., Հ. Բ, Երևան, 1976, էջ 15: Տաղի սկիզբը՝ «Այբէն մինչեւ քէն քենէ գանգատիմ ես, բաներս ես ո՞ւմ ասեմ, երբ դու լըսել չես»:

զերալոյս վարդապետն մեծ Գրիգոր Տաթեւացի աշակերտ Յոհաննու Կախիկ կոչեցելոյ» խորագրով (Գլուխ «ՃՁԶ») և հաջորդում է Հովհան Որոտնեցու մահվան առիթով Գրիգոր Տաթևացու հեղինակած դամբանական ներբողին: Մ. Պոտուրյանը, որ հանգամանորեն զբաղվել է Առաքել Սյունեցու գործունեության հարցերով, այս ներբողը չի հիշատակել հեղինակի արձակ երկերի շարքում[1]: Նրա մասին առաջին անգամ խոսում և Առաքել Սյունեցու արձակ երկերի պոտուրյանական ցանկը սրբագրելու առաջարկություն անում է Մ. Աբեղյանը[2]: Ներբողն իրենց ուսումնասիրություններում ակնարկային ձևով հիշատակել են Հր. Աճառյանը[3], Ա. Ղազինյանը[4], Ա. Մադոյանը[5]:

«Քարոզգրքի» ձեռագիր ամբողջական ընդօրինակությունների մեջ բացակայում են Առաքել Սյունեցու և նրանից հետո՝ Մեսրոպ Ջուղայեցու ներբողները: Մեզ հայտնի չէ նաև այս երկի որևէ ձեռագիր ընդօրինակություն[6]: Ենթադրում ենք, որ այս ներբողներն ավելի ուշ են ներմուծվել Քարոզգրքի կազմի մեջ՝ գուցե հրատարակիչ Աբրահամ Թրակացու ձեռքի տակ եղած միակ՝ Հովհաննես վարդապետի տրամադրած գաղափար օրինակից: Քանի որ «ոչ գոյր ի մէջ ազգիս մերում գիրքս այս, բայց միայն անունն», ուստի հրատարակիչն ստիպված է եղել տպագրել առանց էական ճշգրտումների (էջ 740)[7]:

ԺԳ դարից ի վեր մեզանում ներբողագրությունն իր ծաղկման բարձրակետին է հասնում՝ դրսևորելով ձևաբովանդակային էական փոփոխություններ: Տարածում է գտնում հատկապես ներբողական վարքի տեսակը. դամբանական ներբողն իր հերթին հանդես է գալիս ներբողական վարքի շեշտված հատկանիշներով, ինչպես Առաքել Սյունեցու քերթվածում: Ներբողների կենտրոն են դառնում պատմական ծանոթ դեմքեր, ժամանակակից հայտնի գործիչներ, տարածում են գտնում նաև հայտնի ուսուցիչներին նվիրված աշակերտների ներբողները[8]:

Առաքել Սյունեցու դամբանական ներբողը մի սրտառուչ և անկեղծ խոսք է, որտեղ առավել տիրապետող է ոչ այնքան ողբերգական տրամադրությունը, որքան Գրիգոր Տաթևացու գործունեության բազմակողմանի թեև գեղարվեստական դրսևորումը, ինչը հիմք է տվել Ա. Ղազինյանին այս ներբողը զետեղել ներբողական վարքերի շարում: Խոսքի ամենատարբեր ծավալումներով և գեղարվեստական ուժգնությամբ աշակերտը ներկայացնում է իր պաշտելի ուսուցչի ողջ գործունեությունն ու նկարագիրը: Այս ներբողն ըստ էության

1 **Պոտուրյան Մկ.**, Առաքել Սիւնեցի եւ իւր քերթուածները, Ուսումնասիրութեամբ հրատարակեց **Հ. Մկ. Պոտուրեան**, Վենետիկ, 1914, էջ ԽԱ-ԽԳ:

2 **Աբեղյան Մ.**, Երկեր, Հ. Դ, Երևան, 1970, ծնթ. 42, էջ 422:

3 **Աճառյան Հր.**, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 600:

4 **Ղազինյան Ա.**, Ներբողը հայ հին գրականության մեջ («Հայ միջնադարյան գրական ժանրերը», Երևան, 1984), էջ 168:

5 **Մադոյան Ա.**, Առաքել Սյունեցի բանաստեղծը, Երևան, 1987, էջ 28:

6 Հ. Անասյանը «Հայկական մատենագիտություն» աշխատության մեջ հիշատակում է այս ներբողի մեկ ընդօրինակություն (Նիկոսիայի ձեռ. 3, «Յայսմաւուրք Գրիգորի Խլաթեցւոյն», էջ 213բ-216բ), սակայն պարզեցինք, որ դա նույն սկսվածքով («Արփիական լուսոյ անշիջանելի...») ներբող է նվիրված Գրիգոր Նարեկացուն և խնդրո առարկա բնագրի հետ որևէ առնչություն չունի: Տե՛ս Ցուցակ հայերէն ձեռագրաց Նիկոսիայի ի Կիպրոս, կազմեց **Հ. Ներսէս Վ. Ակինեան**, Վիեննա, 1961, էջ 14:

7 Հրատարակչի վկայությամբ ճշգրտվել են միայն բնագրային ակնհայտ աղավաղումները:

8 Ներբողի մասին տե՛ս **Ղազինյան Ա.**, Ներբողը հայ հին գրականության մեջ, էջ 169-176: **Դոլուխանյան Ա.**, Հայ միջնադարյան գրականության հիմնական ուղղություններն ու ժանրերը, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2012, էջ 42-101:

ժամանակակիցների դրսևորած վերաբերմունքի ընդհանրացումն է եռամեծ վարդապետի նկատմամբ, քանի որ այստեղ նկարագրված Տաթևացու կյանքի դրվագները ոչ միայն զուգահեռելի են մեզ հասած բոլոր տեղեկություններին ու ակնարկների հետ, այլ նաև լրացնում և նոր մանրամասներ են ավելացնում եղածին: Այս հատկանիշով պայմանավորված՝ որպես գեղարվեստական բարձր արվեստով հյուսված գրական երկ՝ ներբողը չի կորցնում նաև իր ճանաչողական արժեքը: Այն հյուսված է ներբողագրության դասական կանոններին համապատասխան. ունի նախաբան, բուն նյութ և ավարտ-վերջաբան:

Ներբողի սկզբում (նախաբան) Առաքել Սյունեցին Գրիգոր Տաթևացուն համարում է «արփիական լույսի անմար ճառագայթ»: Այս համեմատությունը խորթ չէր ո՛չ Գրիգոր Տաթևացու, որ համարվել է երկրորդ Լուսավորիչ, ո՛չ էլ նրա ուսուցիչ Հովհան Որոտնեցու համար:

Թովմա Մեծոփեցին 1407 թ. «Գիրք Հարցմանցի» իր ընդօրինակության հիշատակարանում գրում է. «Կատարեցաւ... առ ոտս մեծ վարժապետի, քաջ հռետորի եւ անյաղթ փիլիսոփայի արթուն անուն Գրիգորի..., որ *իբր արեգակն պայծառ փայլէ* ի մէջ Հայաստանեայց եկեղեցւոյ եւ լուսաւորէ իմաստութեամբ եւ գիտութեամբ առհասարակ զամենեսեան՝ զմերձաւորս եւ զհեռաւորս...»[1]:

Հովհան Որոտնեցուն նվիրված ներբողը նույն կերպ է սկսում նաև Գրիգոր Տաթևացին. «*Պայծառ փայլեալ* ի տանս արեւելեան ցեղից հայկազեան *լուսանշոյլ ցոլմանց արփիաւորչի* մերոյն հսկողի» (էջ 711): Արեգակի հետ համեմատությունը համոզիչ է թվում նաև այն առումով, որ ԺԴ դարավերջին Սյունյաց վարդապետներն ընդհանրապես համարվում էին «լուսաւոր վարդապետներ» (ՄՄ. հմր. 7823, «Յաղագս արեւելեան վարդապետաց»)[2]:

Ունկնդրի վրա ազդեցություն գործելու նպատակով, միաժամանակ նուրբ քնարականությամբ Գրիգոր Տաթևացու գործունեությունը ներկայացվում է որպես ի վերուստ սահմանված մի խորհուրդ, որն անկարելի է բացահայտել: Ուստի և հեղինակը հայցում է ուժ և իմաստություն այդպիսի մարդու վարքը ներբողելու համար: Ներբողի սկիզբը դառնում է մի տեսակ անձնական քնարերգությանը բնորոշ անկեղծ դրսևորում. մի կողմում ամեն ինչով կատարյալ վարդապետն է, մյուս կողմում՝ համեստ կարողություններով աշակերտը. «Լո՛յս ծագեա ի խաւարեալ հոգիս եւ բորբոքեա՛ աստուածային հրովդ զսառուցեալս ի մեղաց... արդ ես՝ խաւարեալս մեղօք եւ ունայնս ի բարեաց հեծեծանօք հայցեմ եւ արտասուօք պաղատիմ առ քեզ. տո՛ւր ինձ ի գանձուց քոց անապական» (էջ 716):

Նախաբանն ավարտվում է Գրիգոր Տաթևացու անձի բացարձակ կատարելության և հեղինակի՝ սեփական ուժերի անկարողության ընդգծումով. «Եւ զի թեպէտ չեմ բաւական, այլ մեծաւ փափագանօք բաղձայ սիրտ իմ, ըղձանայ միտս եւ տենչայ խորհուրդ իմ բարբառիլ բանիւ եւ դրւատել բան ինչ ներբողինի առ երջանիկ եւ աշխարհալուր եռամեծ եւ տիեզերալոյս հռետորն քրիստոսատիպ եւ արթուն անուն Գրիգոր վարդապետն» (էջ 717):

Մեզ հայտնի փաստերի հիման Գրիգոր Տաթևացու գիտամանկավարժա-

---

1 Հիշատակարաններ, էջ 78:

2 «Ի թուականի[ի]ս մերոյ ՊԼԴ. (1385) էր, յորժամ երեւեցան այն լուսաւոր վարդապետք ի Սիւնեաց վիճակի, *փայլեցան որպէս արեգակունքն*» (տե՛ս Մովսիսյան Ա. Խ., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության, Երևան, 1958, ծնթ. 1, էջ 104):

կան գործունեությունը կարելի է ընդհանրացնել մի քանի դրվագներով.

1. Եղել է բացառիկ աշխատասիրության, մեծ եռանդի տեր, արդար և համարձակ անձնավորություն.

2. Հայտնի գիտնական և դասախոս. դասախոսություններ է կարդացել Մեծոփավանքի և Սաղմոսավանքի դպրոցներում, ունեցել է բազմաթիվ նվիրված և շնորհալի աշակերտներ.

3. Քարոզել է Հայաստանի քաղաքներում և վանքերում թե՛ աշխարհականների, թե՛ հոգևորականների առջև.

4. Եղել է կաթոլիկության դեմ մղվող պայքարի պարագլուխներից և հայ ուղղափառ եկեղեցու պաշտպաններից:

Այս բոլոր դրվագներն արտացոլված են ներբողում. բուն նյութի հե՛նց սկզբից Առաքել Սյունեցին ընդգծում է կարևորը՝ ուսուցչի կատարած գործը, նրա արտաքին և ներքին կատարելությունը՝ «Նա էր պէտ վարժից եւ տեղեակ իմաստից, տեսակն ցանկալի եւ տիպն հրաշալի» (էջ 717): Կարծես արձագանքելով անտիկ փիլիսոփաներին, որոնք գեղեցիկ մարմնում գեղեցիկ հոգին էին տեսնում՝ գրում է. «Եւ արդ ոչ ոք գտաւ համեմատ նորա. ոչ ի ձեւ հասակին եւ ոչ ի գեղ պատկերին, ոչ ի մաքրութիւն հոգւոյն եւ ոչ յանարատութիւն մարմնոյն... ոչ ի կերպն հրեշտակական... քանզի ամենայնիւ էր լցեալ» (էջ 717):

Թովմա Մեծոփեցին իր Պատմության ԺԸ հատվածում Գրիգոր Տաթևացու մասին խոսքն ավարտում է հետևյալ բնորոշմամբ. «Եվ նա առատ ու ճոխ էր մտքով, բոլոր ազգերի մեջ նրա նմանը չկար..., երկրորդ աստվածաբան էր, Հովհան Ոսկեբերան... Եվ երանի էր տեսնողներին ու լսողներին, որովհետև կերպարանքը զարհուրելի էր, և բազում անգամ լսում էինք մարդկանցից, թե Քրիստոս այս ձևով աշխարհ եկած կլինի»[1]: Մեծոփեցին ակնարկում է, թե Տաթևացին քրիստոսակերպ արտաքին ուներ: Հետաքրքիր է, որ Առաքել Սյունեցին նույնպես նշում է, թե մարդիկ «...ընդ աստուածատիպ նկարն հիանային» (էջ 718):

Ներբողի տարբեր հատվածներում է հեղինակն անդրադառնում Տաթևացու արտաքինին և նրա ճարտար խոսքին: Միջնադարյան գրականության այս բացը, երբ արտաքին նկարագիրը ստորադասվում է անձի ներքին նկարագրին ներբողների մեջ վերացած է. հեղինակը կարևորում է նաև արտաքինը. «Տեսլեամբն ահաւոր եւ բանիւն զօրաւոր եւ խոսիւքն հրաշաւոր» կամ «ո՛վ վայելուչ դիմացն, ո՛վ քաղցրահայեաց աչացն, ո՛վ քաղցրաբարբառ շրթանցն, ո՛վ հոգէշարժ խօսիցն» (էջ 717) կամ «նախ ի պատկերին գեղեցկութիւնն խնդային եւ ապա ընդ բարբառոյն համեղութիւնն զուարճանային» (718): Հակասություն չկա այս գովեստների մեջ. հիշատակարաններում Գրիգոր Տաթևացին բնորոշվում է հիմնականում որպես «Քաջ հռետոր», իսկ նրա արտաքինի մասին ուշագրավ տվյալներ հիշատակում է նաև Թովմա Մեծոփեցին իր վարքում. «... հասակաւ երկայն, դիմօք պայծառ, տեսակ արժանի գոռոզութեանն, հերօք խարտեաշ, մորուօք առատ, միշտ պահեցող, յոյժ արտասուեղ, պատուօղ տօնից, սիրող սրբոցն բանից»[2]:

Վերը նշվեց Գրիգոր Տաթևացու աշխատասիրության, անսպառ եռանդի

1 **Թովմա Մեծոփեցի**, Պատմագրական երկեր, Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները **Ա. Մադոյանի**, Երևան, 2003, էջ 16:

2 ՄՄ ձեռ. 6607, էջ 6ա:

և համարձակության մասին. գիշերային ժամը աշխատելու ամենահարմար ժամն է եղել Գրիգոր Տաթևացու պես բազմազբաղ մարդու համար. «Աշխատութեամբ զգիշերն անցուցանէր եւ ընթերցմամբ զցերեկն նահանջէր... Ի գիշերի խոկմամբ զիմաստս գրոց հաւաքէր եւ ի տուընջեան աշակերտացն պատմէր»: Հենց այսպիսի նվիրվածությունն էր պատճառ դարձել, որ «երթային առ ի աշակերտիլ նմա» (էջ 718):

Այս հատկանիշներն է ընդգծում նաև Թովմա Մեծոփեցին՝ Գրիգոր Տաթևացու մյուս աշակերտը. «Եւ էր անդադար յընթերցումն եւ ի գրել աստուածային իմաստից»[1]:

ԺԳ դարից սկսած ներբողի ձևաբովանդակային կարևոր փոփոխությունը՝ ազգային երանգավորումը, դրսևորված է նաև այս քերթվածում: Գրիգոր Տաթևացու դերը գնահատվում է համահայկական շրջանակների մեջ. «Հովիւն արթնական եւ պահապանն զգուշական: Աղն համեմիչ եւ նեխելոց պիտանացուն: Քաջ մշակն[2] եկեղեցւոյ սրբոյ եւ արդիւնարար վաստակաւորն Գրիգորիս: Երկրորդ լուսաւորիչն տոհմիս հայկազեան, որ յայտնեցաւ ի վերջին դարս ի յետին ժամանակս եւ *յերեկոյանալ աւուրս* եւ յաշնանային եղանակս՝ ծաղիկ բազմերանգ գունով փթթեցաւ, *լցեալ զտուն*[3] հայոց մեծաց *անմահական հոտով*» (էջ 717): Տաթևացու ազգային-եկեղեցական գործունեությունից ելնելով՝ այս հատվածը կարելի է մեկնաբանել այլաբանորեն՝ որպես վարդապետի կողմից հակաեկեղեցական շարժումների կանխման մասին ակնարկ:

«Ամարան» հատորի «Քարոզ վասն երեկոյան ժամու», «Քարոզ վասն առաւօտու» մասերում Տաթևացին զարգացնում է ցերեկվա և գիշերվա հակադրության միտքը՝ գիշերը կապելով ձմռան հետ, իսկ ձմեռը՝ կռապաշտության և չարիքի. «Եւ ի յամառն տիւն առաւելու եւ գիշերն յաւելու եւ տիւն նուազի: Այսպէս եւ մեք, յորժամ ջերմանամք ի սէրն Աստուծոյ, բարի գործն յաւելու ի մեզ, եւ չարն նուազի. եւ յորժամ ցրտանամք յաստուածային սիրոյն՝ չար ձմեռն տիրէ մեզ, եւ բարին նուազի» (էջ 343): Նման մի մեկնաբանություն կապված է հինկտակարանյան «Երգ երգոցի» «Վասն զի ահա ձմեռն էանց, անձրեւք անցին եւ գնացեալ մեկնեցան, ծաղիկք երեւեցան յերկրի մերում» (Երգ, երգոց, Բ 11-12) հատվածի՝ Գրիգոր Տաթևացո մեկնության հետ. «Ձմեռը կռապաշտությունն է, որը հալվեց, երկրորդ՝ անպտղությունը, որը ծաղկեց, արեգակի հեռանալը, որը մերձեցավ: ... Գարունն էր տնօրինությունը, այժմ եկեղեցու ամառն է, աշունն է հանդերձյալը, երբ արդյունքն են հավաքում»[4]:

Երբ մեկտեղում ենք այլաբանական այս բացատրությունները, Առաքել Սյունեցու գրածն ընկալում ենք հետևյալ կերպ. Գրիգոր Տաթևացին իր գործունեությամբ ծաղկեցրեց հայոց եկեղեցին և հավատը՝ պայքարելով նրան հակառակ տարրերի դեմ[5]: Այլաբանական ընկալման օգտին է խոսում նաև այն

1 Նույն տեղում:

2 Հովիվը, աղը, մշակը Քրիստոսի նշանակներն էին, և այս կերպ ընդգծվում է Գրիգոր Տաթևացու աշխարհիկ աստվածահաճո գործունեությունը. հմմտ.՝ «Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» (Յովհ. Ժ 11), «Դուք էք աղ երկրի» (Մատթ. Ե 13), «Ես եմ որթն ճշմարիտ, եւ հայր իմ մշակ» (Յովհ. ԺԵ 1):

3 Ընդգծված արտահայտությունները կապ ունեն հինկտակարանյան «Երգ երգոցի» հետ:

4 **Գրիգոր Տաթևացի**, Երգ երգոցի մեկնությունը, թրգմ. **Խ. Գրիգորյան**, Երևան, 2005, էջ46:

5 Այդ մասին են վկայում հատկապես «Գիրք հարցմանցի» հիշատակարանները. «...Կարկէ զբերանս երկաբնակ հերձուածողաց» (ՄՄ հմր. 9247, «Գիրք հարցմանց Գրիգորի Տաթեւացւոյ», գրիչ՝ Թովմա Մեծոփեցի, էջ 401ա), Հիշատակարաններ, էջ 78: «Հարցմունք Գրիգորի վեհիմաստ հռետորի քաջ իմաստասիրի եւ վարդապետի Հայոց, մանաւանդ ախոյանի ուղղադաւանացն

հանգամանքը, որ Առաքել Սյունեցին շատ սիրել է «Երգ երգոցը». նա հեղինակել է քարոզներ այս գրքի տարբեր հատվածների մեկնությամբ, «Երգ երգոցի» պատկերային համակարգն է կիրառում նաև «Ադամքգրքի» իր հիշատակարանում Գրիգոր Տաթևացուն հիշատակելիս[1]:

Ներբողի մեկ այլ մասում արդեն առանց այլաբանության Առաքել Սյունեցին Տաթևացուն համարում է. «Ուղղափառաց էր ախոյեան եւ հերձուածողաց էր վանիչ... հերձուածողաց հալածիչ եւ հերետիկոսաց կարկիչ» (էջ 718):

Հեղինակն ակնարկում է, որ Գրիգոր Տաթևացին համարձակ էր և շիտակ, նրա համար արդարությունն ամենակարևորն էր, և չկար անգամ դասային սահմանափակում. «Թագաւորաց էր խրատիչ, եւ իշխանաց յանդիմանիչ, մեծատանց էր հրահանգիչ... ստութեան էր վանիչ, եւ ճշմարտութեան էր ուսուցիչ» (էջ 717)[2]:

«Ամարան» հատորի «Քարոզ վասն առաջնորդաց, թագաւորաց եւ իշխանաց» հատվածում են դրսևորվել ժողովրդի և իշխանական դասի հարաբերության մասին Գր. Տաթևացու մտորումները. «Յորժամ կարգաւորն եւ իշխանն սխալին, ամենայն ժողովուրդք եւ իշխեցեալքն ընդ նոսին սխալին... եւ անկարգանան» (էջ 423):

Գրիգոր Տաթևացուն նվիրված Մատթեոս Ջուղայեցու դամբանական ներբողում (ՄՄ հմր. 1402, էջ 270բ-278ա) նույնպես ուշագրավ փաստեր կան Տաթևացու կենսագրության այս մասի հետ կապված: Թվարկելով, թե նրա մահվանից հետո ինչպես են դատարկվել բոլոր այն վայրերը, որտեղ լինում էր Գրիգոր Տաթևացին (եկեղեցու հրապարակը, «ի գահոյս թագաւորական», իր տանը), թե ինչպես են որբացել աշակերտները և խոցոտված հոգիներով ցիրուցան եղել փշոտ մացառուտներում, Մատթեոս Ջուղայեցին անգամ սոցիալական ընդվզումների ալիքի ուժեղացումն է կապում ուսուցչի մահվան հետ. «(Աքացեն) զմիմեանս, խածատեն զմարմինս իրերաց, բամբասեն զառաջնորդս իւրեանց, տրտնջան ի տանուտէրէ իւրեանց, ի մարմինս մաշին, ի միտս տանջին, ի հարկահանաց ձանձրանան, յանօրինաց տառապին...» (ՄՄ հմր 1402, էջ 277ա)[3]: Արդյոք սա իսկապես չի նշանակում, որ իր ներքին ուժով ու շրջահայացությամբ Գրիգոր Տաթևացին կարողանում էր զսպել և հանդարտեցնել անհանդուրժողականությունը, սոցիալական բողոքը, սաստել մեծատուններին, ինչպես վկայում է ներբողագիրը. «Անպատմելի էր խոնարհութիւնն, անձանձիր էր ուսուցանելն, աներկիւղ էր յանդիմանելն, անահ էր ի սաստելն, աննախանձ էր ի խրատելն, անաչառ էր ի դատելն» (էջ 718):

Առաքել Սյունեցին չի մոռանում նաև ուսուցչի անսահման նվիրվածությունը առաքելական եկեղեցուն և Քրիստոսին. «Քրիստոս» անվան կրկնություն-

---

եւ ընդդիմի հարկանող չարափառացն դասուց...», Հիշատակարաններ, էջ 509:

1

Նստած աղբյուրների ակերի մեջ՝
Աստվածաշնչի ծաղիկ-խոսքերի,
Հոգու ձեռքերի մատներով քաղում ես,
Փունջ-փունջ բաշխում մարդկանց հոգիներին:

Ձմուռսի լեռան վրա բնակվելով,
Լույսի նման պայծառացած,
Սիրտն իմ հալվել է ինչպես հուրից
Քո նկատմամբ սիրո բաղձանքից
(«Սյունյաց երկիր», 2010, հմր. 16 (213), էջ 3):

2 Հնարավոր է, որ այստեղ Առաքել Սյունեցին անմիջապես նկատի է ունեցել առաջնորդներին, թագավորներին, իշխաններին և մեծատուններին ուղղված Քարոզգրքի ՃԺԱ և ՃԺԲ քարոզները, էջ 422-425, 426-428:

3 Հիշատակարաններ, էջ 119-120, ծնթ.:

ներով իմաստի սաստկացման ճանապարհով ընդգծում է վարդապետի նաև այս հատկանիշը. «...որ միշտ զՔրիստոս քարոզէր, որ միշտ զՔրիստոս դաւանէր, որ միշտ զՔրիստոս փառաւորէր, որ միշտ զՔրիստոսի տնօրէնութիւնն ճառէր, որ միշտ զամենասուրբ Երրորդութիւնն խոստովանէր» (էջ 718):

Ներբողի պատկերային մյուս առանձնահատկությունն աստվածաշնչյան, հատկապես նորկտակարանյան խորհրդանիշների բանաստեղծական յուրացումն է: Եթե իր ներբողի մեջ Գրիգոր Տաթևացին նախընտրում էր աստվածաշնչյան կոնկրետ սյուժեների համադրումը Հովհան Որոտնեցու կյանքի տարբեր դրվագներ հետ, ապա Առաքել Սյունեցին գործածում է միայն խորհրդանիշը, ինչպես «հովիվ», «աղ», «մշակ», «դռնապան», «ձկնորս», «վաճառական» և այլն: Այս բոլոր խորհրդանիշներն ունեն իրենց խոր արմատները համաքրիստոնեական գրականության մեջ և արժանի են առավել խորքային ուսումնասիրության: «Գրիգորիոս մեծ րաբունապետի» անվան կրկնությամբ հյուսված այդ ամենաազդեցիկ հատվածը ներբողի ավարտն է. «Գրիգորիոս՝ իմաստուն տնտեսն..., Գրիգորիոս՝ քաջ հռետորն եւ իմաստուն բժիշկն..., Գրիգորիոս՝ ուռն բանաւոր..., Գրիգորիոս րաբունապետն՝ մեծ ուռկանն..., Գրիգորիոս՝ վաճառականն անգին մարգարտին...» (էջ 719):

Բառակրկնությունների, հակադրույթների, ճարտասանական կրկնությունների դեպի չափազանցությունը տանող ոլորուն շղթայի ամփոփումն է ներբողի այս ավարտը: Այն ամենասերտ կապով կապված է Աստվածաշնչի պատկերային համակարգի, մասնավորապես՝ ավետարանական առակներից բխող խորհրդանիշների և այլաբանական մեկնությունների հետ[1]:

Ներբողի ավարտը սրտառուչ մի ափսոսանք է, որի ակնունքները տանում են դեպի Մովսես Խորենացու Ողբը. «Արդ, ով եղբարք, ողբասցուք զմեզ, թէ յորպիսի տեսոյ զրկեցաք...: Յորպիսի վարդապետէ որոշեցաք...: Աւաղ՝մեզ զի այլ ոչ տեսանէ քաղցրահայեաց կերպարանն եւ այլ ոչ բարբառի հրածորան լեզուն» (էջ 719):

Առաքել Սյունեցին փիլիսոփայական, միաժամանակ նաև կենսափորձից ելած խոր իմաստությամբ մարգարեանում է. «...թէպէտեւ մարմնովն հրաժարեցաւ ի մենջ՝ այլ իմաստութեամբ հոգւոյն ի մեզ է..., թէպէտեւ քաջ սերմանօղն ննջեաց, այլ սերմանեալն ի նմանէ ինքնին բերէ զպտուղն ըստ Բանին Յիսուսի» (էջ 719): Վկան տասնյակ աշակերտները, որոնք տիեզերալույս վարդապետի ավանդները շարունակեցին Հայաստանի տարբեր դպրոցներում:

Արձակ այս ներբողն անկեղծ ձոն է՝ վարակիչ և սրտառուչ: Այդ հատկանիշներին Առաքել Սյունեցին հասել է ինչպես շարադրանքի անկեղծությամբ, այնպես էլ քնարերգուի ձիրքով: «Երգաբան» հորինողին հաջողվել է վերացնել արձակի և չափածոյի սահմանները՝ ստեղծելով նուրբ երաժշտականությամբ շարադրանք՝ թերևս ներբողի ամենաուժեղ կողմը:

Այսպիսով՝ Առաքել Սյունեցու՝ Գրիգոր Տաթևացուն նվիրված խոսքը խորությամբ, նուրբ երաժշտականությամբ, որպես դամբանական ներբող կամ ներբողական վարք, միաժամանակ բացահայտում է վարդապետի կյանքի տարբեր դրվագներ: Այն ունի գրական-ճանաչողական արժեք և լրացնում է Առաքել Սյունեցու գողտրիկ երկերի շարքը:

[1] Ավետարանական առակների մեկնություններ, կազմող՝ **Լ. Հովսեփյան**, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2013, էջ 81-88, 515-540:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., Երկեր, Հ. Դ, Երևան, 1970:
2. Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942:
3. Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ դդ., Հ. Բ, Երևան, 1976:
4. Ավետարանական առակների մեկնություններ, կազմող՝ Լ. Հովսեփյան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2013:
5. Գիրք քարոզութեան, որ կոչի Ամարան հատոր արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն եօթնալոյս վարդապետի, Կոստանդնուպօլիս,1741 :
6. Դոլուխանյան Ա., Հայ միջնադարյան գրականության հիմնական ուղղություններն ու ժանրերը, Երևան, 2012:
7. Թովմա Մեծոփեցի, Պատմագրական երկեր, Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Մադոյանի, Երևան, 2003:
8. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ման առաջին (1401-1450), Կազմեց՝ Լ.Ս. Խաչիկյան, Երևան, 1955:
9. «Հայ միջնադարյան գրական ժանրերը», Երևան, 1984:
10. Մադոյան Ա., Առաքել Սյունեցի բանաստեղծը, Երևան, 1987:
11. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 6607:
12. Մովսիսյան Ա. Խ., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության, Երևան, 1958:
13. Պոտուրյան Մկ., Առաքել Սիւնեցի եւ իւր քերթուածները, Ուսումնասիրութեամբ հրատարակեց Հ. Մկ. Պոտուրեան, Վենետիկ, 1914:
14. «Սյունյաց երկիր», 2010, հմր. 16 (213):
15. Ցուցակ հայերէն ձեռագրաց Նիկոսիայի ի Կիպրոս, կազմեց Հ. Ներսէս Վ. Ակինեան, Վիեննա, 1961:

ПАНЕГИРИК АРАКЕЛА СЮНЕЦИ, ПОСВЯЩЕННЫЙ ГРИГОРУ ТАТЕВАЦИ - ЛИЛИТ ОВСЕПЯН - Аракел Сюнеци автор панегирика, посвященного Григору Татеваци. В рамках литературного жанра и по его закономерностям, но с поэтическим вдохновением и талантом дополняя ряд панегириков, посвященных Татеваци, он сообщает самые разнообразные подробности о его жизни и сущности. Эти факты представляют познавательную ценность и дополняют известные нам сведения о Григоре Татеваци.

Система создания образа в панегирике Аракела Сюнеци связывается с символами Священного Писания и с их аллегорическими толкованиями, а также свидетельствует о том, что именно творческие возможности символов, исходящих из евангелических притч, были широко использованы в жанре панегириков.

Ключевые слова: Книга проповедей, надгробный панегирик, житие, «Летный» том, колофонный факт, проза, творение.

THE PANEGYRIC DEDICATED TO GRIGOR TATEVATSI BY ARAKEL SIUNETSI - LILIT HOVSEPYAN - Arakel Siunetsi is the author of a panegyric dedicated to Grigor Tatevatsi. In the frame of the literary genre and according to it rules, but by poetical inspiration and talent, completing the series of panegyrics devoted to Tatevatsi, it communicates the most various facts about his life and essence. These facts have a cognitive value and they complete our knowledge about Grigor Tatevatsi.

The system of image creation in the panegyric of Arakel Siunetsi is tied with symbols of the Holy Scripture and their allegoric interpretation, also giving testimony about the fact that namely the creative possibilities of the Evangelic parabolas՛ symbols were widely used of in the genre of panegyric.

***Key words**:* Book of Sermons, funeral panegyric, life, «Summer» tome, colophon fact, prose, creation.